ՎԵՐՆԱՇԵՆ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արմեն Գրիգորյան
Հեռախոս՝ +374 94 75 64 35

Վերնաշեն գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզի հյուսիս արևելյան հատվածում: Հեռավորությունը մարզկենտրոնից 5կմ է, մայրաքաղաքից՝ 125 կմ: Սամանակից է Գլաձոր, Մալիշկա, Գողթանիկ համայնքներին:
Բարձրությունը ծովի մակարդակից 1450մ է: Գյուղի նախկին անվանումը եղել է Սրկողովք:

Վերնաշեն գյուղը հիմնադրվել է 1829թվականին: Գյուղի բնակիչների նախնիները եկել են Սալմաստ գավառից: Բնակիչների հիմնական զբաղմունքը՝ խաղողագործություն, հողագործություն, անասնապահություն:
Բնակավայրի ընդհանուր տարածքը 5323հա է: Համայնքն ունի խաղողի և պտղատու այգիներ: Համայնքի տարածքով անցնում է Սրկողունք գետը:

Գյուղն ունի պատմամշակութային եկեղեցիներ: Համայնքի հյուսիսային մասում գտնվում է Սպիտակավոր վանքը, Պռոշաբերդը, հյուսիս-արևելյան մասում գտնվում է Թանադե վանքը, Արկազի Սուրբ Խաչ վանքը, որը եղել է Վայոց ձորի նշանավոր ուխտատեղի: Համայնքում է գտնվում Գլաձորի համալսարանի թանգարանը:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, կուլտուրայի տուն և փոստային բաժանմունք:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 48 հուշարձան: